ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ 2015

Վանաձորի Ռաֆֆու անվան N19 հիմն. Դպրոց, 6բ, դասավանդող Անի Թորոսյան

13.03.2015թ.

Դասի թեման՝ Ապահով համացանց

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի նպատակը՝ Գիտելիքների հաղորդում համացանցի վտանգների, դրանցից զերծ մնալու և համացանցի տրամադրած հնարավորությունների ու ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերաբերյալ:

Խնդիրները

Կրթական

Քննարկել համացանցի դրական և բացասական կողմերը

Տալ գաղափար փոստաղբի և կիբերհետապնդողների վերաբերյալ

Ամրապնդել "Աշխատանք մի քանի պատուհաններով","Գործողություններ ֆայլերի հետ" թեմաները, վերհիշել և կիրառել Paint ծրագրի միջավայրում կիրառվող գործիքները, ձևավորել գրագետ և անսխալ տեքստերի մուտքագրում

Դաստիարակչական

Ձևավորել համացանցային "գրագետ սպառողների"

Զարգացնող

Բանավոր խոսք, համակարգչով աշխատելու հմտություններ, էլեկտրոնային պաստառների ստեղծում

Դասին կիրառվող անհրաժեշտ պարագաներ՝ պրոյեկտոր, համակարգիչներ՝ համացանցի առկայությամբ, գունավոր թերթիկներ, խորհրդատվական թերթոններ:

Դասի ընթացքը

1. Մինչ դասը սկսել աշակերտներին բաժանել զույգերի, որպեսզի յուրաքանչյուր համակարգչից օգտվեն 2 աշակերտներ:

2.Բացման խոսք 2 րոպե
Այն զուգակցել կից ներկայացված ցուցադրումներով:

3. Հարց ուղղել աշակերտներին՝ "Ի՞նչենքանումհամացանցում " 5 րոպե

Նրանց տրամադրել 2 րոպե, որպեսզի լրացնեն թերթիկները: Յուրաքանչյուր զույգ լրացնում է Tertik ֆայլի համապատասխան դաշտը, ինչպես նաև գրում է գունավոր թերթիկի վրա:

Ի՞նչ եք անում համացանցում

Ի՞նչ վտանգների կարող ենք առնչվել:

Լսել աշակերտների արտահայտած մտքերը և ընդհանրացնել:

4. Ուղղել հաջորդ հարցը՝ Ի՞նչ վտանգների կարող ենք առնչվել համացանցից օգտվելիս: 5 րոպե

Նրանց տրամադրել 2 րոպե, որպեսզի լրացնեն թերթիկները: Յուրաքանչյուր զույգ լրացնում է Tertik ֆայլի համապատասխան դաշտը, ինչպես նաև գրում է գունավոր թերթիկի վրա:

Լսել աշակերտների արտահայտած մտքերը և ընդհանրացնել:

5. Տեսանյութի ցուցադրություն https://www.youtube.com/watch?v=boaOEYS55rc 3րոպե

6. Բացատրել, թե ինչ է փոստաղբը և ովքեր են կիբերհետապնդողները: 2րոպե

7. Թեստավորում 5 րոպե

Հանձնարարել լրացնել safe.am կայքում տեղակայված esafety խաղի թեստերը: Խաղը բաղկացած է 4 բաժիններից, յուրաքանչյուր զույգին հանձնարարել լրացնել դրանցից միայն մեկը: Թե որ բաժինը պետք է լրացնի զույգը, ընտրվում է վիճակահանությամբ: Յուրաքանչյուր զույգ վաստակում է միավոր առցանց հավաքած միավորների չափսով, ուսուցիչը ամրագրում է նախապես պատրաստած գնահատման թերթիկում:

8. Պաստառների պատրաստում 15 րոպե

Ուսուցիչը հանձնարարում է Paint ծրագրով պատրաստել էլեկտրոնային պաստառներ, որոնք պետք է ներառեն խորհուրդներ իրենց հասակակիցներին(առնվազն 3 խորհուրդ): Աշխատանքի ավարտից հետո ուսուցիչը ամրագրում է միավորները գնահատման թերթիկում:

Բոլոր տեղեկատվական պաստառները պահպանվում են ցանցային թղթապանակում, աշխատանքի ավարտից հետո դրանք ցուցադրվում են:

9. Ամփոփում, գնահատում, թեժ գիծ հեռախոսահամրի տրամադրում 5րոպե

10. Խմբային թեստ, ամփոփում 3 րոպե

Զույգերը՝ համապատասխան համարով համակարգչի մոտ	Անուն,ազգանուն	Թեստի միավորներ (առավելագույնը՝ 5 միավոր)	Պաստառի պատրաստման համար վաստակած միավոր (առավելագույնը՝ 4 միավոր)	Ակտիվություն (առավելագույնը՝ 1 միավոր)	Գնահատական
I զույգ		5	4		9
II զույգ					
III զույգ					
IV զույգ					
V զույգ					
VI զույգ					
VII զույգ					
VIII զույգ					
IX զույգ					
X զույգ					

Մինչ աշակերտները պատասխանում են հարցերին, լրացնում են թեստը , ուսուցիչը մուտքագրում է անունները:

11.Դասի ավարտից հետո աշակերտների կողմից պատրաստվախ նկար-պաստառները տպագրվում և փակցվում են դպրոցի պատերին՝ մյուս աշակերտների և ուսուցիչների իրազեկման նպատակով: Դրանք տարածվում են նաև սոցիալական ցանցերով: